

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 մայիսի 2013 թ.

N 315-Ա

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ  
ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաքաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունվարի 11-ի «Լեռնային Ղարաքաղի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1-Ն որոշման 17-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաքաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

Հաստատել Լեռնային Ղարաքաղի Հանրապետության ընդերքի ուսումնասիրության միջոցառումների 2013 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## Ծ Ր Ա Գ Ի Ր

### ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ

#### I. Ընդհանուր դրույթներ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում կատարված վերջին տարիների երկրաբանա-գնահատման ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նախկինում կատարված երկրաբանա-հետախուզական աշխատանքները ավարտին չեն հասցվել և այժմ լրացուցիչ երկրաբանական ուսումնասիրության իմաստավորում են պահանջում: Այս առումով, 2013 թվականին սույն ծրագրով նախատեսվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի երկրաբանական ուսումնասիրության միջոցառումներ:

Երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու համար «Արցախի երկրաբանական էքսպեդիցիա» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հասանելի են երկրաբանական տեղեկատվությունը, մասնագիտական ունակությունները, տեխնիկական հագեցվածությունը, երկրաբանական ուսումնասիրության փորձը, ինչպես նաև այլ միջոցներ, որոնք նպատակաուղղված են ձեռնարկելու սույն ծրագրի շրջանակներում նախատեսվող բոլոր աշխատանքները:

#### II. Երկրաբանական ուսումնասիրության միջոցառումների նպատակը և խնդիրները

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի ուսումնասիրության միջոցառումների 2013 թվականի ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) նպատակաուղղված է.

1) հանրապետական երկրաբանական ֆոնդի, ինչպես նաև օգտակար հանածոների հանքավայրերի և հանքերակույմների կադաստրի ձևավորմանն ու վարմանն ուղղված աշխատանքների իրականացմանը,

2) հանրապետության տարածքում նախկինում հայտնաբերված հանքերակույմների և հանքայնացված կետերի հանքաբերության հեռանկարայնության գնահատմանը,

3) հանրապետության տարածքում նոր հանքերակույմների և հանքայնացված կետերի հայտնաբերմանը և նրանց հանքաբերության հեռանկարայնության գնահատմանը,

Ծրագրի հիմնական խնդիրն է հանդիսանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության լեռնահանքային արդյունաբերության համար հանքա-հումքային հենքի ստեղծումը:

### **III. Ծրագրային միջոցառումների համակարգը**

Ծրագրով սահմանվում են 2013 թվականին իրականացվելիք հետևյալ միջոցառումները.

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի ուսումնասիրության վերաբերյալ առկա տեղեկատվական նյութերի և հաշվետվությունների հիման վրա հանրապետական երկրաբանական ֆոնդի ձևավորման աշխատանքների իրականացում, այդ թվում երկրաբանական ֆոնդի տվյալների սկանավորում և թվայնացում ըդերքօգտագործողներին տեղեկատվությամբ ապահովելու համար,

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում հայտնի օգտակար հանածոների հանքավայրերի և հանքերևակումների անձնագրերի կազմում կադաստրը ձևավորելու և այն վարելու համար,

3) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի նախկին ուսումնասիրություններից հայտնի Մարտունու շրջանի Զարդանաշեն, Հադրուֆի շրջանի Մեծ Թաղեր, Շուշիի շրջանի Մեծ Շեն, Եղցահող, Դաշտահող, Ծաղկածոր (Տասը վերստ) և Շահումյանի շրջանի Թութիունի հանքերևակումների տեղամասերում ստուգիչ երկրաբանական և գնահատման աշխատանքների կատարում նրանցում գունավոր, ազնիվ և հազվագյուտ մետաղների քանակական պարունակությունները ճշգրտելու և կոնդիցիաներն ու արդյունաբերական նշանակությունները որոշելու համար,

4) 1-ին կետում նշված հանքերևակումների տեղամասերի թւերում և խոր հորիզոններում որոնողա-հետախուզական աշխատանքների կատարում գունավոր, ազնիվ և հազվագյուտ մետաղների նոր կուտակումներ հայտնաբերելու համար:

### **IV. Ծրագրային միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքները**

1. Ունենալ հաստատուն ու անընդհատ համալրվող հանրապետական երկրաբանական ֆոնդ և օգտակար հանածոների հանքավայրերի և հանքերևակումների կադաստր,

2. Գունավոր, ազնիվ և հազվագյուտ մետաղների հանքային կուտակումների հայտնաբերման և նրանց արդյունաբերական նշանակության որոշման միջոցով լեռնահանքային արդյունաբերության գործունեության համար ունենալ հանքահումքային հենք:

### **V. Ծրագրի ֆինանսական ապահովումը և իրականացման սկզբունքը**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի ուսումնասիրության միջոցառումների ծրագրի ֆինանսավորման համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեից կհատկացվի 58200.0 հազ. դրամ:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**